

տերին: Հալածելու ժամանակ Շիրինին փաշայի կողմից նուիրած կարվիր ջուբբան ահից կոխում են մածնի թուլուղի մէջ Կարբանիեալան գիւղում, ուր ես մի քանի անգամ լսած եմ նորանց ծիծաղելով պատմելու միջոցին:

Շիրին սուլթանը գերդաստանով փախչում է Տաճկաստան: Նորա եղբայրները թողուցին խնդրեցին և ստացան: Շատերը, որ անյայտ էին իշխանութեանը, լուսթեամբ վերադարձան իւրեանց տները: Իսկ ջուլեցի Ալիմարգանը, իւր որդի Օրուջը, Հերհերցի Իսմայիլը և Այսրցի Իսկեանդարը, որոնք շատերին գայթակղեցրել էին խմբին մասնակցելու. աքսորուեցան Տամբուլի նահանգը, ուր վերջին երկուսը մեռան, իսկ Ալիմարգանը և իւր որդի Օրուջը մի քանի ժամանակից յետոյ թողուցին ստանալով՝ վերադարձան իւրեանց տուն: Այսպէս են պատմում այս անցքը այժմ շատ շատերը:

Այս իրողութիւնը արտայայտում է թուրք տարրի ընաւորութիւնը: Վերջին Առւս -- Տաճկական պատերազմի ժամանակ ևս լինում էին Դարալագեազի այս և այն գիւղում գաղանի շարժումներ, բայց կառավարութեան շուտափոյթ միջոցները իսկոյն զսպում էին անհեռատես մարդկանց:

(Մարտնախէ)

ՔԱԶԻԵՐՈՒՆԻ

ԿՐՕՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄՆ.

Այն օրից, երբ գերմանական մանկավարժութիւնը ազդեցութիւն ունեցաւ Հայ մանկավարժական գրականութեան վերայ՝ գերմանական կրթութիւն ստացող Հայ երիտասարդների միջնորդութեամբ, մեր դպրոցների դասատուութեան ձևն ևս փոքր առ փոքր փոփոխութեան ենթարկուեցաւ և թողեց Հին ուղղութիւնը. նոր առարկաներ և նոր մեթոդներ մոռա գործեցին Հայ դպրոցի մէջ, Թէև վերանորոգման գործը շարունակուում է, սակայն ոչ մի առարկայ, մեթոդի վերանորոգման կողմից՝ այնչափ յետ չէ մնացել, որչափ կրօն ուսուցանման: Թէև կրօնի դասագրքեր շատ են լոյս տեսել, սակայն այդ շատու-

Թիւնը դեռ ևս ապացոյց չէ կրօնի դաստիարակութեան մեթոդի բարենորոգման, Վերջին տարիներում յաճախ գրուել է այդ բարենորոգման անհրաժեշտութեան մասին, բայց բարենորոգման իրագործումը դեռ ևս շատ հեռու ենք, և այս իրողութիւնը ցաւալի և միեւնոյ՝ ժամանակ զարմանալի է, որք ինկատ ենք առնում կրօնի ուսուցման բարձր նշանակութիւնը հոյ մանկանց դաստիարակութեան համար, և այն վնասները որ յառաջացել և յառաջանում են կրօնի դաստիարակութեան այդ թիւր ուղղութեան շնորհիւ. այդ վնասը տարածարդարտը վերաբերում է ոչ միայն անհատներին այլ հոյ հասարակութեան ամբողջութեանը:

Մեր դպրոցների մէջ կրօնի դաստիարակութեան գլխաւոր նպատակն է՝ որչափ կարելի է շատ բան անգիր անել — իսկ հասկանալը երկրորդական նշանակութիւն ունի, աշակերտները ուսուցչի հարցերին պատասխանում են անգիր արած բառերով, այս ապացոյց է, որ այդ բառերի միտքը մանկանց հոգւոյ մէջ չէ տպաւորուել, վասն զի հակառակ դէպքում այդ բառերի վերարտադրութիւնը մանկական եղանակով պէտք է արտայայտուէր և նոյն իսկ հոգեբանական հիմանց վերայ այլ տեսակ և չի կարող լինիլ, վասն զի գաղափարները չեն կարող անգիր անելու ժամանակ մանկան հոգւոյ մէջ տեղը չեն, այլ պէտք է նոյն իսկ մանկան կողմից կանոնաւոր վերացուցման եղանակով ձեռք բերուին: Մեր կրօնուսուցիչները տալիս են աշակերտին կրօնական տեղեկութիւններ, առանց կրօնական — բարոյական զգացմունք ներշնչելու նորա մէջ և այդ տեղեկութիւններն ոչինչ ազդեցութիւն չեն ունենում աշակերտի կենաց ընթացքի վերայ, նոքա սովորում են ինչպէս արդէն ասացի. այդ բառերի կտուտակումն բերանացի, առանց նորա նշանակութիւնը հասկանալու: Այդպիսի գիտութիւնը ոչինչ արժէք չի կարող ունենալ, վասն զի բառերն մտապատկերների, զգացմանց և գաղափարների արտայայտութիւն են, իսկ ով որ այդ չունի իւր մէջ, նորա համար բառերն ոչինչ բովանդակութիւն չունին, այլ միայն ձայնարկութիւն են: Բարձր իւր մէջ մտածողութիւնից ոչինչ չէ պարունակում, երբ մենք լսում ենք բառը կամ

հնչիւնը, պէտք է նոյն իսկ մեր հրատարակչութեանը նորա հետ կապակցելու:

Հայ ուսուցիչը — նաև ծրագրերը — աշխատում է՝ որչափ կարելի է շատ նիւթ լցնել սանիկի գլուխը — սակայն «երբ մնում է գատարկ, դրա վերայ ուշագրութիւն դարձնող չկայ: Կրօնի ուսուցման մեր գործ դրած մեթոդին, յարմարուում է գասական մանկավարժ Ժան-Պալի հետեւեալ խօսքը. «Մարդս պէտք է շատ կրօնական լինի, որ մեր սովորական կրօնի ուսուցումը չի կարողանում բուրոյլին արմատախիչ անել այդ: Կրօնի ուսուցումը միւս առարկաների համեմատութեամբ աւելի դժուար է, որովհետև գործ ունի մանկան հոգւոյ վեմագոյն մասի, գեւ ևս մեծաւ մասամբ հեռու գտնուող զգացմանց և մտապատկերների հետ: Այս զգացումներն և մտապատկերները կարող են միայն աստիճանաբար յառաջանալ մանկան սրտում և այս իսկական, զօրեղ զգացմանց և բովանդակութեամբ հարուստ բարոյական մտադրութիւնների յառաջացնելն է կրօնի ուսուցման գլխաւոր խնդիրը: Մեր հոգևորականութիւնը պէտք է հոգ տանէ կրօնի ուսուցման բարենորոգման մասին և արդէն ժամանակ է, որ տեղի ունենայ այդ բարենորոգումն. կրօնի հարցը մեզ համար հայ ազգութեան ապագայ հարց է: Պէտք է միջոցներ գտնել, որ հետզհետէ զարգացող անտարբերութիւնը դէպի մեր սուրբ եկեղեցին չընդարձակուի, պէտք է աշխատել կրօնական-բարոյական ուսուցմամբ մեր մանուկ սերնդի սիրտը դաստիարակել, մեր հոգևորականութիւնը չէ աշխատել՝ կրօնի ուսուցման այնպիսի ուղղութիւն տալ, որ համապատասխանի մանկան զգացումների զարգացման. ուստի թող ուրախութեամբ թոյլ տայ, որ մանկավարժութեանը օգնէ դորան այդ գործում, քանի որ վերջինս իւր ձեռնած նպատակներով ամենայն կերպ աշխատում է սանիկի մէջ ոչ թէ միայն վառ պահել կրօնական զգացումն, այլ և նպաստում է այդ զգացման զարգացման: Կրօնական և աշխարհային զարգացումը չպէտք է միմեանցից բաժանել, դժբա երկուսն ևս ձեռք ձեռքի տուած պէտք է յառաջ ընթանան, Դպրոցը պէտք է բացատրէ, որ մենք Քրիստոնեայ և Հայաստանեայց եկեղեցւոյ անդամք ենք և կարող

էն+ լինել այրողնէ+ ասանց այժմեան լասասորսած քարս + սոցս +ակընս-լի-նից յէր ծնալու:

Ամենահաստատուն համոզումն, որ բարձր է ամեն գիտութիւնից, կարելի է գտնել բարոյականութեան մէջ, որն իսկապէս որոշում է մարդուս իսկական արժէքը և բնաւորութիւնը: Այժմ որ ճշմարիտ զարգացման էական սկզբունքը նորա բարոյական նպատակն է: Դաստիարակութեան նպատակն է աշակերտից մի Բարոյական մարդ պատրաստել, այսինքն նորան մօտեցնել անձնաւորութեան իրէտիքն. սակայն բարոյականութիւնն ինքն ըստ ինքեան ընդունում է միւսնոյն ժամանակ և կրօնական կերպարան+, ուստի և դաստիարակութեան նպատակն պէտք է լինի ոչ միայն բարոյական այլ և կրօնական-Բարոյական Բնասորս-լի-ն զարգացնել մանկան մէջ:

Բարոյականութիւնը մարդկային արժանաւորութեան առաջին պայմանն է և ի՞նչ են բարոյականութիւն չունեցող մարդիկ՝ եթէ ոչ մարդկութեան նախատինք բերող արարածներ... Կարողը չի կարող կարարեալ բնաւորութիւն զարգացնել, այլ նա կարող է միայն մի բարոյա-կրօնական բնաւորութեան զարգացումն պատրաստել, վասն զի նա սանիկների մտածմունքն և կամքն ուղղում է դէպի այդ իրէտիքը:

Բնաւորութիւնը կազմակերպվում է բոլորովին աստիճանաբար և հաստատուն կամքը կազմվում է առանձին մտապատկերների շրջանների մէջ: Բնաւորութիւնը այն է, ինչ որ մարդկամենում է, իսկ կամքը կազմվում է ցանկութիւններից. ուրեմն եթէ դաստիարակութեան նպատակը բնաւորութեան զարգացնելն է, նա պէտք է ամենից առաջ այնպիսի ցանկութիւններ յառաջ բերէ մանկան մէջ, որոնք յենվում են բարոյականութեան վերայ: Սակայն որովհետև նոյն իսկ ցանկութիւնները մտապատկերների յարաբերութիւններից են յառաջանում, ուստի և դաստիարակութիւնը պէտք է մանկան մտապատկերներն այնպիսի յարաբերութեան մէջ դնէ, որ դրանք բարոյական ցանկութիւններ յառաջացնեն: Միայն ցանկութիւնները բաւական չեն, որոնք պէտք է կամքի աստիճանին բարձրանան. դորա համար հարկաւոր է ցանկացածին հասանելի-

Եւան համոզումն և կատարեալ ճանայողութիւն ցանկացածին հասանելիութեան պատճառաբանութեանց: Այս կարելի է երկու կերպ ձեռք բերել կամ փոքր և դորա վերայ հիմնուած տեսական հայեացքով, կամ թէ կրօնական հասարակ:

Ուրեմն բարոյական կամք ունենալու ժամանակ անհրաժեշտ է ցանկացածին հասանելիութեան համոզումն ունենալ, իսկ այդ համոզումն ունենալու ժամանակ հարկաւոր է փորձ կամ հաւատ: Որովհետեւ փորձով այդ համոզմունքը ձեռք բերելու համար մտքդ պէտք է գործէ. ուստի և դաստիարակիչ ուսումնարանը պէտք է առիթ տայ իւր սանիկներին բարոյական գործողութիւններ կատարելու, որպէս զի նրանք անձամբ այդ փորձերն յաջողեցնեն: Սակայն աշակերտները բարոյական գործողութեանց փորձեր անելով կտեսնեն, որ իրենց բարոյական ձգտումները մի տեղ յաջողւում են, միւս տեղ սչինչ հետեւանք չեն ունենում. նրանք շուտով կտեսնեն, որ այլ զօրեղ ոյժեր իրենց կամքը հակառակ բարոյականին են յառաջ մղում, կտեսնեն նոյնպէս, որ արտաքին կեանքի հանգամանքները միշտ չեն թոյլ տալիս բարոյական իդէալների իրականացումն: Շուտով մտքդ հանդիպում է այնպիսի հանգամանքների, ուր նա պէտք է կամ հետեւի բարոյականութեան՝ կապակցուած արտաքին թշուառութեան հետ, կամ անբարոյականութեան՝ կապակցուած արտաքին բազդաւորութեան հետ: Այս փորձերի ճնշման ներքոյ մտքդուս կամքը տատանւում է բարոյականութեան և աշխարհահայեցողութեան մէջ և յաճախ երկրորդն յաղթող է հանդիսանում. մտքդ բաւականանում է հասանելիներով և մի կողմը թողնում ըստ երեւոյթին անհասանելին: Սակայն բարոյագիտութեան պահանջը կախումն չունի հասանելիութեան կարելիութիւնից, նա իւր պահանջը յառաջադրում է իբր անպայման հասանելիութեան արժանաւորութիւն ունեցող: Նա պահանջում է ոչ թէ միայն այս կամ այն բարոյական մտքի տեսակն, այլ ամբողջ կամքի հպատակումն փորձնական հիմնագաղափարներին: Մի այսպիսի կատարեալ հպատակութիւն, — ի բաց առեալ կրօնական մտապատկերներն — չի կարող լինել. ոչ մէկը մեզանից չի կարող այդ իրա-

գործուած տեսնել, սակայն այդ մեր ձգտման նպատակը պէտք է լինի: Այստեղից պարզ կարելի է եզրակացնել, որ բարոյական իդէալին հասանելիութեան համոզումն ոչ թէ փորձի և իմացութեան գործ է, այլ հաստի: Այս հաւատն է՝ կրօնական հաւատ վասն զինա մի փորձից չյառաջացած, սակայն երկ-ւոյթից աշխարհի վերայ տիրող զօրութիւն է:

Պարզ է, որ բարոյական իդէալները չեն կարող տեղի ունենալ առանց կրօնական հաւատի: Առանց կրօնի չկայ բարոյականութիւն, հեռեւապէս անկրօն ուսումնարանը՝ չկարողանալով դաստիարակութեան նպատակն—բարոյական մարդ զարգացնել—իրագործել, չի կարող դաստիարակել լինել, Կրկնում ենք դարձեալ, որ մեր դպրոցներում գործողները սխալվում են՝ կրօնի ուսուցմանը չնչին նշանակութիւն տալով:

Դատարկ խօսքեր են, երբ ասում են՝ թէ կարելի է առանց կրօնական մտիւնների դաստիարակել մի ժողովուրդ կամ մի անհատ: ասում է յայտնի հոգեբան-փիլիսոփայ և լայպցեքի համալսարանի հանգուցեալ նշանաւոր ուսուցչապետ Ֆէյնէր:

Նա, ով որ արտաքսում է դպրոցից կրօնի ուսուցումը, կամ թէ երկրորդական նշանակութիւն է տալիս գորան՝ գըջլում է արևը երկնքից կամ թէ խլում է տարուայ գարունը: ասում է դասական մանկավարժ Տրոյշնեյզը: Իսկ ներկայիս գերմանական ամենայայտնի մանկավարժներից մէկը՝ Դեյոյֆելը — ձօնըօն — ասում է. «Ով որ կամենում է դպրոցից դուրս ձգել կրօնի ուսուցումը, նրան կարելի է ուղղակի իրաւամբ ասել, որ նա խլում է դպրոցական կեանքի գարունը. սակայն մի՞թէ դորանցից լաւ են նոքա, որոնք թէև կրօնի ուսուցումը թողնում են դպրոցում միայն անուսով, սակայն իրապէս դորանցից մի ամայն և ցուրտ յիւս էն շինում, որի մէջ ոչ մի օքր՝ չէ կարող թեւժաստել»:

Կրօնի դասատուութեան խնդիրը ամենից աւելի ուշագրութեան առարկայ պէտք է դառնայ հայ մանկավարժների համար. որովհետև այս եղանակը և ձևը, որ ցայժմ գործ է գրուել կրօնի ուսուցման ժամանակ, չի կարող և չպէտք է շարունակուի, եթէ հայ դպրոցը կամենում է ազդեցութիւն

ունենալ սանիկների և խղճի զարգացման կազմակերպութեան վերայ, Կրօնի գաստուութեան այդ մեթոդը, ինչպէս որ երկարժամանակեայ փորձը ցոյց տուեց, ճիշդ չէ, ոչինչ ազդեցութիւն չէ թողնում սանիկի սրտի և խղճի վերայ և մինչև անգամ վնասակար հետևանքներ է ունենում:

Մի միայն գիտելալը ամենայնաջող դիպուածում անգամ ցոյց է տալիս սանիկին մի իդէալ, սակայն այդ իդէալը սանիկը չէ իւրացնում, իւր իդէալը չէ շինում: միայն գիտենալը կարելի է նմանեցնել ընծայուած ոսկի դրամներին. սանիկը զուարճանում է դոցա փայլով, հնչիւնով, դոցա շատութեամբ՝ առանց ճանաչելու դոցա իսկական արժէքը: Նոյնն է սանիկի համար և կրօնական ուսումն անանց իրական փորձի. ամենայն ինչ անգիր անելը ատելի է դարձնում սանիկի այքում նոյն իսկ կրօնը: Պատմել և յետ պատմելը ոչինչ ազդեցութիւն չէ թողնում սանիկի ներքին աշխարհի վերայ. պէտք է աւելի խորը թափանցել նիւթի մէջ և այնտեղ գտնուած մարգարիտները հանել սանիկի օժանդակութեամբ և աշխատակցութեամբ:

Անհրաժեշտ է կրօնի ուսուցման ցայտմ տիրած ուղղութիւնը խորտակել և դորա տեղը դնել մի այնպիսի մեթոդ, որ համապատասխանէ մանկալարժակած—հոգեբանական պահանջներին և նպաստէ աշակերտներէ մէջ կրօնական և բարոյական զբացմանց յարազան և զարգանալուն:

Նորերումս Արժանապատիւ Սահակ Ժահանայ Սահակեանցի աշխատասիրութեամբ լոյս տեսած «Կրօնի դասագիրքը» և «Սրբազան պատմութիւնը» մի հիշատակար է այդ ուղղութեամբ:

Եւ՛ ցանկութիւնն է, ասում է Արժ. Հայրը իւր յառաջաքանի մէջ, որ կրօնուսոյցը իւր սաների մէջ կրօնական հետաքրքրութիւն զարթոցնէ, այսինքն նիւթն այնպէս աւանդէ, որ սաները հետաքրքրուին, որ ստացածը հետաքրքրէ ստացողներին, որ շարժէ, գրդէ դէպի գործունէութիւն, դէպի յառաջագիմութիւն, որ նրանց մէջ մի ներքին զօրութիւն ծնէ, որ այդ զօրութիւնը՝ հետաքրքրութիւնը ստիպէ նրանց անվերջ կերպով կատարելագործելու իրանց ստացածը և շահելու քանքարը—ահա ուսուցման ըստի դադարներ:

Մեր նպատակն այն չպիտի լինի, որ մեր աշակերտը այսօր
 բան գիտենայ, այլ այն՝ որ գիտեցածը մեռեալ դրամագլուխ
 չըմնայ նորա մէջ: Մենք աշակերտներին պէտք է այն զէնքը
 տանք: որ մի օր, դպրոցի նստարանը թողնելուց յետոյ, զգուս-
 նօք չնայեն այն առարկաների վերայ, որոնցով երկար տարիներ
 զբաղուել են, որ դպրոց աւարտելը բանտից դուրս գալ չհա-
 մարեն, որ նրանք վկայականն ստանալուց յետոյ գրքերն և
 տետրները փոշու կերակուր չդօրձենն, այլ իւրեանց ստացածը
 հիմն ընդունելով՝ կեանքի մէջ շարունակեն կատարելագործել
 և հարստացնել իւրեանց դրամագլուխը: Բայց ե՞րբ կանեն
 նրանք այդ բանը: — Երբ մենք կտանք իրանց այն կարողութիւ-
 նը, որ կոչվում է հետաքրքրութիւն . . . : Ինչ պիտի անէ
 կրօնուսոյցը որպէս զի իւր աշակերտների մէջ այդ զօրութիւնը
 ներշնչել կարողանայ: Ահա հէնց այդ նպատակի համար կազ-
 մած է սոյն աշխատութեան երկրորդ մասը՝ ուսուցչի բաժինը,
 նիւթի մշակութիւնը . . . : Մենք տալիս ենք ինչ միայն՝ հո՛ւմ
 նիւթը, ինչպէս չպիտի մոռանալ, չէ որ մենք սրտի վերայ ենք ու-
 զում ազդել և ոչ այս կամ այն անձի պատմութիւնը միայն ու-
 սուցանել: Նիւթը մեր ձեռքին ճիշտ է մեր ցանկացած նպա-
 տակին ձգտելու և հէնց դորա համար էլ ընտրուած հն սա-
 կաւաթիւ և այնպիսի նիւթեր, որոնք աւելի ընդունակ են այս
 կամ այն կրօնական, բարոյական իմաստը տալու սանին: Մենք
 չենք էլ կամենում և ոչ կարող ենք մեր դպրոցական սուղ տա-
 րիներով և սակաւաթիւ փամբրով ամբողջ սուրբ գիրքն անցնել
 ծայրէ ի ծայր: Այլ ստիպուած ենք փոքրով բաւականանալ և
 նորանով զարթեցնել մեր ունկնդիրները մէջ այն հետաքրքրու-
 թիւնը դէպի սուրբ գիրքը՝ դէպի կրօնի աղբիւրը, որ սանը մի
 օր ուսումնարանի սեամբ թողնելուց յետոյ, մեր նորան տուած
 հետաքրքրութիւնը շարժէ ուղիւսը լրացնելու, որ մեր սանը
 ընտանեկան յարկի տակ որպէս հայր, որպէս ընտանիքի ազատ
 անդամ՝ ստացած քանքարները հողի մէջ չթաքցնէ: Այսպէս ու-
 բեմն չպիտի միայն ինչ ուսուցանել, այլ և ինչպէս սովորաբար
 շատ ենք սալի, քիչ էլ բաւական է: Դրան ենք աշխատում
 հարստացնել: որով վերայ պիտի աղբիւր. Բոլորն անկարելի է:

ընդարձակեալ պիտի անել» *) :

Կրօնի ուսուցման նպատակն է սուրբ գրքի և մեր սուրբ Հայրապետաց գրուածներէ հիմանց վերայ քրիստոնէական հաւատ և կեանք զարթեցնել ու զարգացնել սանիկներէ մէջ : Մանկավարժական տեսակէտից՝ կրօնի ուսուցումն ևս յիստորիկ-նկարագրային պէտք է սկսէ, ուստի և կրօնի սկզբնական ուսուցման համար համարեալ ամենայն տեղ գործ է գրվում՝ Սրբազան պատմութեան առաջին և երկրորդ մասերը, որովհետև այդտեղ պատմութեան առաջին ձևը նկատողական, պարզ, դիւրըմբռնելի և բնական է : Եւ թացի դորանից այդ պատմութեան գրքերը պարունակում են իւրեանց մէջ հարուստ կրօնական և բարոյական մտքեր : Դոցա մէջ գտանվում են շատ գեղեցիկ սկզբունքներ պատանեկական սրտի կանոնաւոր զարգացման համար և ահա այդ սկզբունքները պէտք է գործ դնել սանիկի կրօնա-բարոյական զարգացման համար :

Այս տեսակէտից առաջնորդուելով Արժ. Սահակ քահանան ասում է իւր յառաջաբանի վերջը. « Էջնց դորա համար էլ մենք կրօնի ուսուցման սկզբնական նիւթը այդ անհուն, այդ հարուստ աղբիւրն (սուրբ գիրքը) ենք ընտրում՝ յարմարուելով ճանկավարժական պահանջներին, ի նկատի առնելով սաների հասակը և զարգացման աստիճանը» **) :

Իրոնական մանկավարժութեան պահանջներից մէկն՝ «աղա-թակընտան-պարմանան աստիճանների հետեւումն ուսուցման ընթացքում՝ առաջնորդուելով Գեօրգի հետեւեալ գեղեցիկ խօսքերից. «Պատանեկութիւնը միշտ պէտք է կրկին սկզբից սկսէ

(*) Տես Դասագիրք կրօնի ուղեցոյց Հայ կրօնուսոյցների համար, հին-ուխարի նիւթի մշակութիւնը, Հաս. Ա. գա ս ա խ օ ս ե յ ներսիսեան դըպ-քանոցի ստորին դաս. աշակ. Սահակ քահ. Սահակիանց. Տփիս. Հրատարակութիւն «Թիֆլիսի Ընկ. հայերէն գրքերի հրատարակ. 8՝ 484 էջ, գինն է 75 կ. Տպարան Ռօսինեանի, 1888 թ. Յառաջաբան էջ 1—3 :

(**) Տես, Մի քանի խօսք Հայ կրօնուսոյցներին, Սահակ քահ. Սահակիանց. Տփիս. Տպարան Ռօսինեանի 1888 թ. 23 էջ, գինն է 10 կ.

և իբր անհատ աշխարհի քաղաքակրթութեան շրջաններով նորից անցնէ»:

Ուսուցման նիւթի լուսաւորութիւնը կամ յաջորդութիւնը պէտք է ընտրել հետեւելով ընդհանուր մարդկութեան քաղաքակրթական—պատմական զարգացման ընթացքին, որովհետեւ մասնկան հոգեկան զարգացումն ևս նոյն շրջաններով պէտք է անցնի ինչ շրջաններով որ անցել է մարդկութիւնը իւր մանկական հասակում: Սուրբ գրքի առաջին մասն, հին կատկարանը կազմում է ընդհանուր մարդկութեան զարգացման պատմական նախաստիճանը, այսինքն դորա քաղաքակրթական—պատմական զարգացման սկիզբը:

Արժ. Սահակ քահանան հետեւելով գիտնական մանկավարժութեան այս պահանջին՝ իւր աշխատասիրած Ալբալան պատմութիւնը բաժանել է հետեւեալ չորս դասաշրջանների:

Ա. Նախապատմական դար (պէտք է լինի դարաշրջան)

Բ. Նահապետների դար (դարաշրջան)

Գ. Դատաւորների դար (դարաշրջան)

Դ. Թագաւորների դար (դարաշրջան)

Սակայն ամսօս, որ Արժ. Հայրը մոռացել է այս բաժանմանց սկզբունքը կամ պատճառները իւր գրքի ընթերցողներին բացատրել. այս պակասը լրացնենք համառօտ կերպիւ:

Աստուծոյ գաղափարը մի այնպիսի լուսատու ճառագայթ է, որ շատ շուտով պէտքէ ներս թափանցէ մանկան մէջ, իսկ այդ գաղափարը ոչ մի դէպքում մանուկը այնպէս շուտ չէ կարող ըմբռնել քան երբ Աստուծուն ներկայացնենք իբր ստեղծող երկնի և երկրի: Արդէն երեք—չորս տարեկան մանուկները հարցնում են «Ո՞վ է լուսինը շինել» և այլն. այսինքն այնպիսի հարցեր, որոնք ցոյց են տալիս, որ մանուկը արդէն կարողացել է ըմբռնել, որ այդ հարց—գործ չի կարող լինել. մանուկը տեսնում է, որ իւր ճանաչած ամենագորեղ մտրոն անգամ—իւր հայրը—չի կարող մինչև երկինք հասնել. ուրիմն այն պատասխանը, որ Աստուծոյ է ստեղծել լուսինը, նոյնպէս և արևը, երկինքը, աստղերը և ամբողջ երկիրը—կարող է մանկան մէջ ստեղծել մի հղի և ամենապարզ էսկի փառաբանը: Այս գաղափարը սանիկները

ստանում են արդէն իւրեանց ընդհանրած և իւրեանց հետ
 դպրոց բերում. «կլէի համար մենք այդչափը բաւական ենք հա-
 մարում: Սանիկը ընտանիքից դպրոց գալով չպէտք է անջա-
 տուի ընտանեկան կեանքից. ընդհակառակը դպրոցը պէտք է
 նորան մի աւելի մեծ ընտանիքի, ընկերութեան մէջ մտցնէ.
 այստեղ սանիկը պէտք է ճանաչէ մի հեղինակութիւն, որին
 հպատակէ իւր մանկական հաւատարմութեամբ, ինչպէս որ իւր
 ընտանիքում ևս հպատակում է ծնողների հեղինակութեան:
 Ի՞նչ ուսուցման նիւթ առաւել նպաստաւոր կլինի այս բանի
 համար քան նահապետական դարաշրջանը. նահապետական պե-
 տութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի աւելի մեծ և ընդարձակ ընդա-
 նէ: Այդ մեծ ընտանիքի անդամները հպատակում են իւր-
 եանց գլխաւորին, ինչպէս մանուկները իւրեանց ծնողաց: Սա-
 նիկներին ծանօթացնելով նահապետների պատմութեան հետ-
 մեր նպատակն է, որ նա հնազանդուի մի ընկերական հեղինա-
 կութեան: Այս նպատակին չէ ծառայում «նահապետական դա-
 րաշրջանը» — որ է 1. աշխարհի արարչագործութիւնը և մարդուս
 ստեղծագործութիւնը. 2. դրախտ. 3. պատուիրազանցութիւն.
 4. կայէն և Աբէլ 5. ջրհեղեղ. 6. Բաբելոնի աշտարակաշինու-
 թիւնը: — Այս դարաշրջանի այդ վեց գլուխները իւրեանց խո-
 րին փիլիսոփայական հիմունքներով շատ դժուարամորս են
 կրօնի ուսուցման «կլէս»-որո՞ւնեան համար. թէև կարելի է
 իհարկէ այդ նիւթն ևս մշակել, ինչպէս արել է Արժ. Սահակ
 քահանան, սակայն այնու ամենայնիւ մեր ցանկացած պարզու-
 թեամբ չի ըմբռնուի և սպասելի վեհ զգացմունքներ չի յառա-
 ջացնի սանիկներին մէջ: Աւելի լաւ է այս նիւթը վերադասել մի
 ուրիշ ժամանակի համար, երբ սանիկներն աւելի մեծ պաշար
 կունենան՝ խորին կրօնական զգացմունքներ իւրացնելու: Արժ.
 Սահակ քահանայի Սրբազան պատմութեան գործածողներին մենք
 առաջարկում ենք՝ «ժամանակա-որակ» թողնել նախապատմա-
 կան դարաշրջանը՝ և ուղղակի սկսել «Նահապետական դարա-
 շրջան»ից, առաջնորդուելով այն սկզբունքից, որ սանիկներին
 պէտք է միայն այնպիսի նիւթ տալ, որ դոքա կարողանան մար-
 սել, համեմատ իւրեանց ունեցած պարզ և հոգեբանական գա-

դափարներին *) :

Սրբազան պատմութեան շահապետներէ զարաշքմալը՝ ամեն ից մօտ է մանկական տեսակէտին և դիւրմբունելի նորա համար. այստեղ պարզ և որոշ կերպիւ յերևան է գալիս Աստուծոյ գաղափարը՝ իբր Հայր մարդկութեան, ինչպէս որ օրի. համար Աբրահամը կառավարում է իւր մեծ ընտանիքը, այնպէս ևս Աստուած կառավարում է ամբողջ մարդկութիւնը կազմող ընտանիքը — աշխարհը: Կրօնական զգացմունքը զարգանում է այստեղ Աստուծոյ և մարդկանց մէջ տեղի ունեցած մտերիմ յարաբերութիւնից և այդ պատմութեանց մէջ այն յաճախ կրկնուող իրողութիւնից, որ մարդս կախումն ունի իւրեանից բարձր եղող մի էակից, Աստուծուց:

Կրօնական զգացմունքից յետոյ մեծ նշանակութիւն ունի դաստիարակութեան համար սանիկի դէպ ամեն մարդային ունեցած ցաւակցութեան և ուրախակցութեան զգացման զարգացումը, մարդկային զգացման և ձգտման բնական և էական հիմունքները, ընկերական, յարակցութեանց ամենահասարակ սկզբունքները մինք քանում ենք նահապետների պատմութեանց մէջ: Եթէ հնութեանց յիշատակարանների միջից հանենք այդ պատմութիւնները, այն ժամանակ մենք շատ քիչ բան կգիտենայինք մարդկային ցեղի, առաջին, բնական և ընտանեկան կեանքի մասին: Այդ պատմութիւնները ներկայացնում են մեզ մարդկային ցեղի սկզբնական զարգացման պատմութիւնը. հրկար կեանք, խաղաղ և միացած ուժով գործող բնաւորութիւն՝ այս է նահապետների ժամանակի նկարագրութիւնը: Դոցա

(*) Այդ առաջարկութեան (նախապատմական դարաշրջանի դաստուութիւնն ապագային թողնելը) գործադրվեցաւ մի քանի տեղ գերմանիայում: Բայց վերջը թէ եկեղեցականութեան բողոքի և թէ սուրբ գրոց հետևողականութիւն պահպանելու առթիւ, բարձի թողի եղաւ. նա մանաւանդ որ արդէն կարևոր գաղափարն Աստուծոյ ամենակարողութեան և իմաստութեան մասին աշակերան իւր ընտանիքից հետը բերում է դպրոց, ուստի և առանձին դժուարութեան չպիտի հանգիպեցնէ այդ դարաշրջանի դասընթացը թէ աշակերտին և թէ ուսուցչին. մանաւանդ եթէ վերջինը փոքր ի շատէ տէր է իւր գիտութեան:

կեանքի ձգտումներն էին՝ հայրական, ամուսնական և մանկական սէր, Աստուծոյ երկիւղ, տնային կամ ընտանեկան երջանկութեան խաղաղ և երկար կեանքի վայելումն: Եւ այժմեան քաղաքակրթութեան համար ի՞նչ աւելի յարմար սկզբնակէտեր կարելի էր ունենալ. տնային կարգապահութիւն, կրօն, սեպհականութեան ամենապարզ գաղափար՝ սոքա էին կազմում այն կաթն, որով կերակրուեւէր մարդկային ցեղի մանկութիւնը և զարգանում:

Պատրիարքների-մարդկութեան այդ մանկական հասակի ժամանակ հեղինակութիւնը մեծ դեր էր կատարում և նոյնը պէտք է լինի անհատական մարդու մանկական հասակում. մանկան քնքոյշ բնաւորութիւնը, որ դիւրահաւատ և ազգեցութեան ընդունակ, հետևող, ամեն բան զարմանքով ըմբռնող է՝ պարունակում է իւր մէջ հաւատ, յոյս և սէր, որ կազմում են բոլոր գիտութեանց, ձգտումների և երջանկութեան սերմերը. այսպէս էր նաև մարդկութիւնն իւր մանկական հասակում: Նահապետական դարաշրջանը նկարագրում է՝ մարդ, այր, կին, հայր, մայր, որդի, ժառանգ, Աստուծոյ պաշտօնեայ — քահանայ — կառավարիչ ու ընտանիքի մեծ, և այս գաղափարների վրայ է հիմնուում ապագայ հաղորուոր տարիների ամբողջ քաղաքակրթութիւնը: «Նահապետական իշխան յաւիտեան կնա մանուկ մարդկանսն ասիլէ դարը», ասումէ շնորհալի կերպիւ Հէրշել փիլիսոփան: Արդեօք մենք չպէտք է մեր սանիկներին նոյն կաթով կերակրենք, ինչ կաթով որ կերակրուել է մարդկութիւնը իւր քնքոյշ մանկական հասակում և միթէ մեր սանիկները սիրով չեն իւրացնի մարդկութեան մանկութիւնը և մեծ հարցասիրութեան ինդրէս — ունենալ այդ կեանքի նկարագրութեան համար:

Այդ պատմութիւններն արթնացնում են սանիկի մէջ նաև այլ հարցասիրութիւններ, ինչպէս օրի. համար էմպիրիքական հարցասիրութիւն, դճքա այնպէս են նկարագրում մարդկանց սերահոութիւնն ու տիրութիւնը, որ սանիկը համակրում է դոցա. դոցա մէջ մարդիկ յերևան են գալիս իւրեանց գործունէութեան մէջ, մարդոց բազմը Աստուծոյ ձեռքին է: Այդ

պատմութիւններն առաջնորդում են սանիկին դէպի կրօնական չնազանդութիւն:

Նահապետական դարաշրջանին հետեւում են «դատաւորներ»-ի և «թագաւորներ»-ի դարաշրջանները. առաջինի նշանաւոր հերոսն հանդիսանում է Մովսէս: Այս շրջաններում Իսրայելացիք արդէն մի ազգ են կազմում և այդ նոր կազմած ազգութիւնը գիտակցաբար հպատակում է մի արքայական հեղինակութեան, որ կարողանում է բոլոր միմեանցից տարբեր ազատ ձգտումները միաւորել և հաւասարակշռութիւնը ապահովել. տրքաները հանդիսանում են իբր Աստուծոյ կամքը կատարողներ: Իսրայէլացիքի դարաշրջանը իսկապէս շատ նիւթ չէ տալիս դաստիարակչական նպատակի համար, որովհետեւ այստեղ ապստամբութիւնը (Աստուծոյ դէմ), նեղութիւնը, դարձը, հանգստութիւնը և կրկին ապստամբութիւնը, նեղութիւնը, դարձը և հանգստութիւնը յաջորդում են միմեանց և կրկնվում. այս մի բարոյական և կրօնական անկման դարաշրջան է Իսրայէլացւոց համար: Միութեան դգացումը խանգարվում է մասնաւոր ձգտումներով. ճշմարիտ աստուածապաշտութեան փոխարինում է կռապաշտութիւնը, ժողովրդի բարոյական կեանքը փոխվում է կռապաշտական անզուսպ վայելչութեանց. մի խօսքով Իսրայէլացւոց կրօնաբարոյական կեանքը երբէք այնչափ չէր փչոցել, որչափ այդ դարաշրջանում: Այս պատճառաւ և բոլորովին արդարացի ենք գտնում, որ Արժ. Սահակ քահանան, այդ դարաշրջանում՝ բացի Մովսէսի պատմութիւնից, Տոյն վեց գլուխ է տեղաւորել իւր Սրբազան պատմութեան մէջ:

Ինչպէս արդէն ասացինք՝ դատարակութեան նպատակն է սանիկից մի բարոյական մարդ պատրաստել, այսինքն նորան մօտեցնել անյնատրուստեան նպատակին: Արդ մանկան այդ իդէալին մօտեցնելու համար բաւական չէ նրա առաջը զնել այդ վերացական գաղափարը, այլ հարկաւոր է մի մարմնացած օրինակի լի անձնաւորութիւն, մի, նոյն իսկ իդէալական անձնաւորութիւն, որ իւր մէջ մեռցրած լինի մարդկային բոլոր արժանաւորութիւններն ու առաջինութիւններն. մանուկն իւրաքան-

չիւր քայլափոխում այդ օրինակելի պատկերը պէտք է այժմ
առաջ ունենայ և միշտ ձգտէ նրան մտտեւալու: Եւ սիլ այլ ոք
կարող է քրիստոնեայ ազգերի համար այդ իդէալական անձ-
նաւորութիւնը ներկայացնել, եթէ ոչ նոյն իսկ հիմնադիրն
քրիստոնէական բարոյականութեան — Յիսուս — Քրիստոս: Եւ
Սրբազան պատմութեան երկրորդ և գլխաւոր մասն է Յիսուս
— Քրիստոսի կեանքը, որ մենք պէտք է ուսուցանենք մեր սո-
նիկներին իբր ամենաբարձր, ամենազղու, դաստիարակութեան
նպատակին ամենաամբիօական և ամենազօրեղ կերպիւ նպատ-
տող նիւթ: Սրբազան պատմութեան առաջին մասը պէտք է
միայն իբր նախապատրաստիչ միջոց ծառայէ քրիստոնէութեան
համար. նա պէտք է սանիկների իւրացուցման կարողութիւնն
ըստ կարելոյն նախապատրաստէ քրիստոնէական գաղափարների
րմուռնման համար. երբ այդ նախապատրաստութիւնը վերջա-
ցաւ, այն ժամանակ միայն սկսվում է դաստիարակիչ դպրոցի
գլխաւոր դործը, այսինքն սանիկը պատրաստվում է ըմբռնելու
այն ամենամաքուր և սուրբ կեանքը: որ վարեց երկրիս վրայ
ամեն ուսուցման իդէալը ներկայացնող անձը — Յիսուս — Քրիս-
տոս:

Յիսուս — Քրիստոսի կեանքը կամ թէ նորա մէջ մարմնացած
աշխուժաւ հայեցողութիւնը և բարոյականութիւնը ներկայաց-
նում է մեզ համար նաև իբր ընդհանուր քաղաքակրթու թեան
ամենաբարձր աստիճանը, որին կարող է համապատասխանել և
անհատի զարգացման աստիճանը, որ կլինի նոյնպէս այդ անհա-
տական զարգացման ամենաբարձր աստիճանը. հետևեալ աստի-
ճանները ներկայացնում են այդ գաղափարների տարածումն
աշխարհիս ամենայն կողմերը: Այսպիսով մեր սանիկներն ուսու-
նելով Յիսուս Քրիստոսի կեանքը, ոտք են դնում քաղաքակր-
թութեան ամենաբարձր աստիճանի վրայ, որի վրայ և պէտք է
մնան նոքա իւրեանց ամբողջ կեանքի ընթացքում. — այս է
քրիստոնէական դաստիարակիչ դպրոցի պահանջը և նպատակը:

Արդեօք ի՞նչ կսով պէտք է տանք սանիկին այս պարունակու-
թեամբ հարուստ և ճոխ նիւթը: Արդեօք նորա ձեռքը տանք

Գլխաւոր բնագիրը կամ նորա հետ ի միասին կարգանք նոյնը՝ թէ տանք աշխարհաբառ թարգմանութիւնը: Գրաբար բնագիրը չի կարելի տալ աշակերտի ձեռքը. որովհետեւ սրբազան պատմութիւնն սուրբող աշակերտը գեռ ևս լեզուի կողմից այդչափ պատրաստութիւն չունի և լաւ չի կարող ըմբռնել, մնում է ուրիմն աշխարհաբառ թարգմանութիւնը: Այժմ կրկին հարց է՝ թէ պէտք է քառասոյն հետեւողութեամբ թարգմանել, թէ քառասոյն ազատ և յարմարեցրած մանկանց մտաւոր պաշարին. — մենք երկուսն էլ չափազանցութիւն ենք համարում: Բաւարական թարգմանութիւնը նպատակայարմար չենք համարում, սրբահետեւ բնագրի մէջ յաճախ պատահում են այնպիսի ոճեր և բառեր, որ հասկանալի չեն կարող լինել սանիկների համար. իսկ քառասոյն ազատ ձեւակերպութեամբ այս նիւթին հեքիաթի նմանութիւնն տալն, ինչպէս արել են շատերն՝ նոյնպէս անյարմար և սնկատաշած է: Ընդհանրապէս պէտք է պահպանել բնագրի բնավորութիւնը, որ վեհ է և սրտի վրայ ազդող, սակայն լեզուի փոփոխութիւններ պէտք է մտցնել, սանիկներին մատչելի լինելու համար: Իսկապէս այս փոփոխութիւնները շատ չեն լինի, որովհետեւ սուրբ գրքի լեզուն ընդհանրապէս պարզ և գեղեցիկ է: — Արժ. Սահակ քահանան իւր Սրբազան պատմութեան մէջ այս միջին ճանապարհն է ընտրել. « . . . Որ թարգմանաբար գլխաւոր բառացի կերպով ծաղկաքաղ է արած սուրբ գրքից . . . » (*), Թէև ի հարկէ տեղ-տեղ պատահում են մանկանց գծուար հասկանալի դարձուածներ կամ բառեր (**):

(*) Ցես դասագիրք կրօնի, յառաջարան էջ 4:

(**) Օրի. համար 1. « դու երկրիս վերայ երբ երեւալ և տատանեալ կ'իջարարես », Օրին. պատ. էջ 8): 2. « Այն ժամանակ Աստուած պատրաստեց մի մ. ծ լուսաւոր՝ ցերեկը, և մի փոքր լուսաւոր՝ գիշերը կառավարելու համար. (նոյն, էջ 2): 3. « Դորակից յետոյ տեսաւ եօթնուերիշ ազազուն խորշակահար հասկեր էլ դուրս եկան » (նոյն էջ 50): 4. « Պալատում իւրաքանչիւր օր գործ էր անվում 90 քու ալիւր. » նոյն, էջ (53) և այլն:

Սոյորական գատաուուութեան մեթոդով նոր նիւթի մշակու-
մը վերանսած է: Երբ աշակերտը կարողանում է դառը «յիտ
պատմել»: այս մեթոդի սխալ լինելն ըստ ինքեան պարզ է. ընդ-
հակառակը հէնց այդակ: ից է «հիւլ» գեռ ևս նիւթի մշակումն.
ուպա պէտք է խորասուզուել պատմած նիւթի մէջ. այս պէտք
է տեղի ունենայ երեք տեսակէտից. 1. կրճական—բարոյական,
2. բարոյական—պարմական և 3. աշխարհագրական տեսա-
կէտից:

Նիւթի մշակումն դժուարանում է առանձնապէս քաղա-
քակրթական—պատմական տեսակէտից, որովհետև այս տեսա-
կէտը չպէտք է գերազանցէ կրօնական—բարոյական տեսակէ-
տին, այլ օժանդակէ սորան: Պատմուած հատուածի մէջ գըտ-
նուած այն տեղեկութիւններն, որոնք վերաբերում են ժողո-
ւորի քաղաքակրթութեան պատմութեանը՝ պէտք է ի մի տեղ
ժողովել և տպա ուսուցիչը այս հաւաքածուից մի ամբողջու-
թիւն պէտք է կազմէ և կենդանի կիրպով նկարագրէ սանիկ-
ներին՝ պատկերների ու նկարների օգնութեամբ:

Ինչպէս քաղաքակրթութեան պատմութեան վերաբերեալ,
նոյնպէս և աշխարհագրական վերաբերեալ նիւթը պէտք է ժո-
ղովուհի աշխարհագրական քարտէզը պէտք է հետզհետէ կազ-
մսել՝ նայելով իւրաքանչիւր հատուածի մէջ պարունակուած
աշխարհագրական նիւթին. այս քարտէզը կօժանդակէ աշխար-
հագրական գաղափարների պարզութեան և հասկանալիութեան:

Իւրաքանչիւր հատուած պէտք է սանիկի կրճական
գարգացման համար նոր նիւթ տայ և ձեռք բերած գանձի վրայ
մի բան աւելացնէ: Առհասարակ ընդունուած է, որ պատմա-
կան հատուածի մէջ պարունակուած կրօնական և բարոյական
հիմնագաղափարները անմիջապէս կներգործեն. առանց դոցա
մատնացոյց անելը. սակայն այս կնիւթագրութիւնը սխալ է, վասն
զի դպրոցի մէջ ոչինչ այնպէս շուտ անցողական չէ, որչափ սրտի
վայկեանական զգացուիլը: Հատուածի մէջ պարունակուած բարո-
յական գատողութիւնները պէտք է առանձնապէս մատնացոյց
անել, յառաջ բերել, պարզել, բացատրել և որոշել. այս է որբա-
զան պատմութեան ուսուցման գլխաւոր արժանաւորութիւնը:

Վատ յատկութիւնները պէտք է խստիւ դատապարտել, լաւ յատկութիւնները գովասանել: Եւրաքանչիւր հասուածից դուրս բերած կրօնական և բարոյական հիմնադրադասարանները պէտք է արտայայտել սուրբ դժգոհմէջ գտնուած համապատասխան խօսքով կամ նոխադասութեամբ, և այդ պէտք է սանիկները բերան գիտենուն. այս կիլինի ամեն հասուածի կրօնաբարոյական նիւթի իւրաքանչեւ: Այս նախադասութիւնները պէտք է ժողովել և կարգաւորել մի առանձին տետրի մէջ. այսպիսով այս բոլորը կիլինի նոյն իսկ սանիկի ինքնուրոյն աշխատութիւնը, նորա յաւաք սեպհականութիւնը:

Սրբազան պատմութեան մէջ պատկերներէց օգտւա քաղելու մասին նայնպէս տարբեր կարծիքներ կան. ոմանք ուղղակի պատկերն են գիտել տալիս և ապա սկսում պատմութիւնը. այլք մի անգամ պատմելուց յետոյ են գիտել տալիս, իսկ ոմանք ևս պատկերները յառաջ են բերում նիւթի մշակման վերջը: Մեր տեսակէտով ճիշտ է միայն վերջինը. միայն միութեան հինգերորդ աստիճանի վերայ պէտք է յառաջ բերել նկարը և նոյն իսկ աստիճանը պէտք է բացատրեն նկարի նշանակութիւնը: Հինգերորդ աստիճանի վրայ սանիկը պէտք է ցոյց տայ՝ թէ արգիօք բարձունջ է ամբողջ հասուածը. եթէ բարձունջ է, ուրեմն և նա պէտք է կարողանայ բացատրել այդ հասուածին վերաբերեալ նկարի ամբողջութիւնը: Այստեղ յերևան է գալիս կրկին սանիկի ինքնաբարձունջութիւնը, որ իւրեան ևս ուրախութիւն է պատճառում և այդ տրամադրութեան մէջ վերջացնում այդ հասուածի մեթոդական միութիւնը:

Եւրաքանչիւր մեթոդական միութեան, այսինքն հասուածի նիւթի մշակումը պէտք է տեղի ունենայ հինգ աստիճաններով, որոնք հիմնուած են հոգեբանական օրէնքների վերայ և հետեւեալներն են:

(Շար. նախէլ)

ԻՍՍՀԱԿ ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆՑ.